

Ի Ն Ա Տ Ի Տ Ո Ւ Տ Ի Ց Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

«Հայ աղքագրություն և բանահյուսաթյուն» մատենաշարի ներկա պրակը ընդգրկում է մասպոլական-գրող Աերիների (Սերինե Մովսեսի Ավագյան) ապրիների ընթացքում հավաքած ու շարագրած պամական Հայաստանի Վասպուրական աշխարհի բնակավայրերից մեկի՝ Արճակի ազգագրական ու բանահյուսական նյութերը։ Հիշյալ ժողովածուն պարասաւելու ընթացքում հեղինակը մշտապես ունկնդրել է Հնագիտության և աղքագրության ինստիտուատի համապատասխան մասնագետներին և հիմնական ուղեցուց է ունեցել Ա. Դ. Լիսիցյանի «Աղքագրական հարցարանը»։

Պամական հանգամանքների բերումով Արճակի աղքարնակլությունից աննշան բեկորներ են մնացել, որոնց մի մասն էլ (գերազանցապես նոր սերունդը) մոռացության է մատնել հնամենի ժողովրդական սովորութներն ու ծեսերը, բանավոր դրույցներն ու երգերը, Արճակի վերաբերյալ գրեթե շկան ապագիր ու անահիպ աղքագրական-բանահյուսական նյութեր։ Այդ իսկ պատճառով իր ժողովածուն պատրաստելիս Ս. Մ. Ավագյանը ապավինել է բացարձակապես իր աւտերին։ Իր շարագրանքը հեղինակը սառւցել ու մասսամբ լրացրել է Երևանում և այլուր ապրող արճակցիների օգնությամբ։

Ժողովածուի բանահյուսական բաժնում ներկայացված ավանդությունները, առակները, երգիծական դրույց-անեկդոաները, երգերը, առածասացվածքները, օրհնանքները, երդումները, անեծքները գրի են առնված հեղինակի կողմից՝ հիշողությամբ, հարազաառեն պահպանելով ապրեր ժամանակներում տեղացի ծերերից լուծ ու

մաապահած նյութերի ամրողականությունը, գաղափարական, գեղարվեսաական ու լեղվական ասանձնահատնությունները։ Որոշ նյութերի պամողների ու կաարողների անունները նշված են, իսկ երբ չի նշված պատմողի ու կատարողի անունը, նշանակում է այն հեղինակի մտապահածն ու հաղորդածն է։

Ա. Մ. Ավագյանի «Արճակ» աշխատությունն ունի մի առանձնահակություն, որով տարբերվում է այս կարգի աղքագրական-բանահյուսական մյուս հավաքածուներից։ Հիշյալ աշխատության մեջ աղքագրական ու բանահյուսական մի շարք նյութեր ներկայացված են շաղկապված ու համագրված։ օրինակ՝ հարսանեկան սովորութներն ու կրանց հետ կապված ծիսական երգերը, երկրագործական դրազմունքն ու աշխատանքային երգերը, աշխարհագրական վայըեղն ու գրանց վերաբերող ավանդությունները և այլն։ Աշխատությունն ունի նաև հավելված, ուր արված է Արճակում երգված մի քանի երգերի մեզեգիների նոտագրությունը և Արճակ գյուղի ծիսերի ցուցակը՝ կաղմված ողջ մնացած արճակցիների համատեղ շանքերով։ Աշխատության վերջում դետեղված ծավալուն բառարանը ներկայացնում է բարբառային գժվար հասկանալի բառերի ու աեղական մի շարք հասկացությունների բացատրությունը։

«Արճակ» ժողովածուն վերակենդանացնում է պաամական Հայաստանի մի գավառի աղքագրական ու բանահյուսական պաակերը և օգաակար ու հարուսա ներգրում է մեր ժողովրդի նյութական ու հոգեոր մշակույթի ուսումնահիրության ընդհանուր դանձարանում։